

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

*Արքայական խոսքը մեր կմնա հավետ...
Վահան Տերյան*

6-րդ դասարան

1. Ո՞ր բառում վարդը չի բուրբուլ. ընդգծի՛ր (2 միավոր).

ա)վարդաստան **բ)** վարդենի **գ)** վարդաջուր **դ)**վարդակ **ե)**վարդաթուփ

2. Մի բառ կա, որը կհոլվացնի, եթե «գ» ավելացնենք, կփչի, եթե «հ» ավելացնենք, կալեկոծվի, եթե «ծ» ավելացնենք: Ի՞նչ կանի, եթե «կ» ավելացնենք (2 միավոր).

ա) կնվագի **բ)** կխոսի **գ)** կկարդա **դ)** կգրի **ե)** կկերակրի

3. Արջ, առյուծ, կորյուն, խոճկոր, խոզ, կով, քոթոթ, հորթ, ոչխար կենդանիներից **ո՞րն է մենակ մնացել (3 միավոր).**

ա) ոչխարը **բ)** հորթը **գ)** կորյունը **դ)** խոճկորը **ե)** արջը

4. Ապացուցի՛ր, որ բանաստեղծության այս հատվածում մակդիրներ կան (3 միավոր).

Անտառում ամպի ծվեններ կային,

Կապույտ մշուշներ կային անտառում:

Օրոր էր ասում աշունն անտառին,

Բայց դեռ անտառի քունը չէր տանում:

Շշուկներ կային անտառում այնքան

Եվ խոնավ-խոնավ բուրմունքներ կային...

Իրար փաթաթված ստվեր ու կաճան,

Ու հետքե՛ր, հետքե՛ր, հետքե՛ր ր մարդկային: (Համո Սահյան, Անտառում)

5. Ո՞ր բառն իր հոմանիշը չունի տրված քառատողում. ընդգծի՛ր ճիշտ պատասխանը (2 միավոր).

Հազար անգամ ապրել ու մեռել եմ,

Խոռվել եմ, հաշտվել ու ներել եմ,

Չափել եմ բարձունքներն ու վիհերը,

Եվ ասելն եմ փորձել և սիրելը: (Համո Սահյան)

ա) մահանալ **բ)** վսեմ **գ)** խորխորատ **դ)** նեղանալ

6. Տեքստը վերաշարադրի՝ր առաջին դեմքով և հետևյալ սկզբունքով՝ ես կայծակն եմ...

(8 միավոր)

Կայծակը չոր ճայթունով բախվեց ժայռին, մի կողմ շարսվեց և թաղվեց կանաչ գետնի մեջ: Ժայռը կարծր էր, կայծակը հազիվ թե կարողացավ գորշ այդ ժայռից պոկել քարի մի երկու փշուր: Ժայռի տակ կանաչ գետինը այդ հովտում ճայթող բոլոր կայծակների գերեզմանոցն էր. գարունների և ամառների բոլոր կայծակները թաղվում էին ժայռի տակ, և մոտիկ կաղնին միշտ, ամեն ճայթունի վախից սրսփում և իր մտքում կաղնիորեն շնորհակալ էր լինում ժայռին այն բանի համար, որ նա՝ ժայռը, հովիտ նետվող բոլոր կայծակները ձգում, թաղում է իր տակ և կաղնուն փրկում խանձվելուց: Քիչ առաջ, երբ կայծակը պտտվում էր հովտի և բլուրների վրա և մտածում էր ճայթել ու դեռ չէր ճայթել, քուռակի մայրը մեղմ խրխինջով կանչեց քուռակին. քուռակի մայրը գիտեր, որ կայծակը ճայթելու է, ճայթունը վախեցնում է քուռակին (Հրանտ Մաթևոսյան, Կանաչ դաշտը):

Ամիս, ամսաթիվ _____

Անուն, ազգանուն, հայրանուն _____

Դպրոց _____

Դասարան _____